ՎԴ/1751/05/24

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16 ապրիլի 2024 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/1751/05/24 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2024 թվականի մարտի 29-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Քնարիկ Մանուկյանը 2024 թվականի փետրվարի 15-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի՝ 2023 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1/6399-2023 գրությամբ հայցվորի

հավատարմագրումը դադարեցնելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի մարտի 5-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2024 թվականի մարտի 29-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի ապրիլի 2-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին մասին, 77-րդ հոդվածին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասին, 2-րդ հոդվածի 2-րդ մասին, 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետին, 54-րդ հոդվածի 4-րդ մասին, «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ և 6-րդ մասերին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11 գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ ՀՀ վարչական դատարանը 2024 թվականի մարտի 5-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի ուսումնասիրությունից հետևում է, որ Քնարիկ Մանուկյանի և ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի միջև ծագած հարաբերությունները վերաբերում են Քնարիկ Մանուկյանի՝ որպես հավատարմագրված լրագրողի և նրան հավատարմագրած ներկայացուցչական մարմին հանդիսացող ՀՀ Ազգային ժողովի միջև ծագած աշխատանքային վեճին, որպիսի վեճը ՀՀ*

վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ՀՀ վարչական դատարանի ընդդատության մեջ չի մտնում, քանի որ դրանով վարչական դատարանին ընդդատյա են միայն հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերը:

Դատարանը փաստում է, որ Քնարիկ Մանուկյանի հայցադիմումով ներկայացված պահանջն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին, քանի որ հայցվորի և պատասխանողի միջև վեճը ծագել է ոչ թե պատասխանողի՝ որպես վարչական մարմնի գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում, այլ այն վերաբերում է Քնարիկ Մանուկյանի, որպես հավատարմագրված լրագրողի, կողմից իր մասնագիտական գործունեության՝ աշխատանքի կազմակերպման վերաբերյալ վարքագծի կանոնները խախտելուն, որոնք սահմանվել են ներքին (լոկալ) իրավական ակտ հանդիսացող ՀՀ Ազգային ժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ԱԺԽՈ-044-Լ որոշմամբ, որպիսի որոշման հիմքով Քնարիկ Մանուկյանը և ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը գտնվում են աշխատանքային հարաբերությունների մեջ այնքանով, որքանով ՀՀ Ազգային ժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ԱԺԽՈ-044-Լ որոշմամբ սահմանվել են հավատարմագրված լրագրողի աշխատանքի կազմակերպման կանոնները:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը եզրահանգում է, որ Քնարիկ Մանուկյանի և ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի միջև ծագած իրավահարաբերության՝ հանրային բնույթ չունենալու պայմաններում հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին, ուստի հայցադիմումը ենթակա է վերահասցեագրման ըստ ընդդատության՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ հաշվի առնելով այն հանգամանքները, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի դատարան»[1]:

6. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին, 24-րդ հոդվածի 1-ին

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 28-33:

մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասին, 26-րդ հոդվածի 2-րդ, 6-րդ, 9-րդ մասերին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ԵԱՔԴ/1369/02/09, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14, 2023 թվականի մարտի 2-ի թիվ ԵԴ/27468/02/19, 2022 թվականի մայիսի 13-ի թիվ ԵԴ/38635/02/19 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2024 թվականի մարտի 29-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. *«(…) Տվյալ դեպքում «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով նախատեսված լրատվական գործունեություն իրականացնող լրագրողի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում հավատարմագրման հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խորհրդի՝ 2017 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում լրագրողների հավատարմագրման կարգը հաստատելու մասին» թիվ ԱԺԽՈՌ-044-Լ որոշումը, որով ամրագրված դրույթների պահանջներին համապատասխան պետք է լրագրողներն Ազգային ժողովում իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնեն, պարկանում է հանրային իրավունքին, քանի որ լրագրողի հավատարմագրումը դադարեցնելու մասին որոշման կայացման լիազորությունը պարկանում է բացառապես Ազգային ժողովին, որն իրացվում է Ազգայի ժողովի աշխատակազմի ղեկավարի կողմից ընդունված ակտի տեսքով:*

Այլ կերպ ասած՝ ներկա պարագայում առկա է հանրային վեճից բխող իրավահարաբերություն և լրագրողի հավատարմագրումը դադարեցնելու մասին որոշումը կայացվել է Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի կողմից հանրային իշխանական լիազորությունների իրացման արդյունքում և ուղղված է եղել Ազգային ժողովի խորհրդի վերը նշված որոշմամբ ամրագրված կանոնների պահպանմանը:

Բացի վերոգրյալից՝ քննարկման առարկա վեճի հանրային բնույթ կրելը հիմնավորվում է նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ըստ գործում առկա փաստերի՝ կողմերը չեն գտնվում իրավահավասար հարաբերություններում, վերջիններիս միջև առկա չէ մասնավոր վեճ և այն մասնավոր հարաբերությունից տարանջատված է թե սուբյեկտային կազմով, թե բովանդակությամբ և թե օբյեկտով: Ավելին՝ մասնավոր հարաբերությունները կարգավորող նորմերը կանոնակարգում են մասնավոր սուբյեկտների միջև ծագած հարաբերությունները, որի ընթացքում պետության ներգրավվածությունն ավելի սահմանափակված է, որը սույն գործի շրջանակներում բացակայում է:

Սույն վարչական գործով մի կողմ է հանդիսանում Ազգային ժողովը, որն իր հանրային իշխանական լիազորությունների իրացման արդյունքում ապահովում է այլ սուբյեկտների ենթարկվածությունը, այսինքն գործ ունենք վերադասության և ստորադասության հարաբերությունների հետ: Տվյալ դեպքում դա դրսևորվում է Ազգային ժողովի խորհրդի կողմից ընդունված թիվ ԱԺԽՈ-044-Լ որոշմամբ, որը Ազգային ժողովի վարչական շենքում լրագրողների գործունեության կանոններ է սահմանում, որն արտահայտում է պետության շահը և որին պարտավոր են հետևել այն անձինք, որոնց գործունեությանն ուղղակիորեն առնչվում է:

(...)

Վերոգրյալը համադրելով քննարկման առարկա վարչական գործում առկա փաստերի հետ՝ գտնում եմ, որ սույն գործը ենթակա չէ քննության ընդհանուր իրավասության դատարանում և հաշվի առնելով այն, որ յուրաքանչյուր դեպքում վեճը դատարանին ենթակա լինելու հարցը պարզելիս դատարաններն առաջին հերթին պետք է ելնեն վիճելի իրավահարաբերության բնույթից, ինչպես նաև հա. ՎԴ/1751/05/24 գործի շրջանակներում առկա են տվյալ վեճի ենթակայության լուծման տարբեր դիրքորոշումներ՝ անհրաժեշտ է սույն գործի ենթակայության հարցի որոշման կապակցությամբ գործն ուղարկել Վճռաբեկ դատարան՝ այդ հարցի վերաբերյալ պարզաբանում և լուծում տալու նպատակով»[2]:

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 45-48:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/1751/05/24 գործն ըստ հայցի՝ Քնարիկ Մանուկյանի ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի՝ 2023 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1/6399-2023 գրությամբ հայցվորի հավատարմագրումը դադարեցնելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի*

Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի*

ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ազգային ժողովը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է»:*

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Ազգային ժողովի մարմիններն են պատգամավորները, Ազգային ժողովի նախագահը, նրա տեղակալները, խմբակցությունները, հանձնաժողովները և Ազգային ժողովի խորհուրդը (...)»:*

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ *«Խորհուրդը հաստատում է Ազգային ժողովում լրագրողների հավատարմագրման, ինչպես նաև Ազգային ժողովի նստավայրում մամուլի ասուլիսների, ճեպազրույցների անցկացման կարգերը»:*

Նույն օրենքի 54-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողներն իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնում են Ազգային ժողովի նստավայրում առանձնացված հատուկ տեղում, իսկ նիստերի դահլիճում կարող են ներկա լինել Աշխատակազմի ղեկավարի թույլտվությամբ»:*

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Լրատվական գործունեություն իրականացնողն իր լրագրողին հավատարմագրելու համար իրավունք ունի դիմել պետական մարմիններ:*

Պետական մարմինը պարտավոր է, սույն օրենքին և գործող մարմնում լրագրողների հավատարմագրման կարգին համապատասխան, հնգօրյա ժամկետում հավատարմագրել լրագրողին:

(...)

2. Պետական մարմիններում լրագրողների հավատարմագրման կարգում սահմանվում են՝

1) լրատվության միջոցին ներկայացվող այն պահանջները (լրատվության միջոցի տեսակը, տարածման տարածքը, մամուլի տպաքանակը և այլն), որոնց պարագայում հավատարմագրվում է նրա լրագրողը.

2) հավատարմագրված լրագրողի աշխատանքի կազմակերպման կանոնները, այդ թվում՝ նրա աշխատանքի արդյունավետության ապահովմանն ուղղված պայմանները.

3) տվյալ մարմնի գործունեության առանձնահատկություններից բխող պահանջները:

(...)

5. Լրագրողի հավատարմագրումը կարող է դադարեցվել նրան հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողի դիմումով կամ նրան հավատարմագրած պետական մարմնի կողմից: Ընդ որում, լրագրողին հավատարմագրած պետական մարմինը սեփական նախաձեռնությամբ հավատարմագրումը կարող է դադարեցնել միայն, եթե հավատարմագրման դադարեցման՝ սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված կանոնների խախտման համար գրավոր նախազգուշացվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, լրագրողը կրկին խախտում է սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված կանոնները:

6. Հավատարմագրված լրագրողն իր աշխատանքը կազմակերպում է տվյալ մարմնում լրագրողների հավատարմագրման կարգին և այդ մարմինների աշխատակարգի կանոններին համապատասխան: Հավատարմագրման կարգի և տվյալ մարմինների աշխատակարգի կանոնների խախտումը լրագրողի հավատարմագրման դադարեցման հիմք է»:

9. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձ է կատարել *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության, երրորդ անձ <<ՄաքԴոնալդս Քորփորեյշն>> ընկերություն* վարչական գործով կայացված որոշման շրջանակներում՝ արձանագրելով հետևյալը.

«(…) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում՝ պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (…) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (…)»[3]:

10. Սույն որոշման 8-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող

[3] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության, երրորդ անձ <<ՄաքԴոնալդս Քորփորեյշն>> ընկերություն*՝ վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Անդրադառնալով լրագրողի հավատարմագրումը դադարեցնելու կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունների բնույթին՝ անհրաժեշտ է նշել, որ լրատվական գործունեություն իրականացնողն իր լրագրողին հավատարմագրելու համար իրավասու է դիմելու պետական մարմիններ, որոնք պարտավոր են օրենքով սահմանված ժամկետում, տվյալ մարմնում լրագրողների հավատարմագրման կարգին համապատասխան, հավատարմագրել լրագրողին:

Ընդ որում, յուրաքանչյուր պետական մարմին, հաշվի առնելով տվյալ մարմնի գործունեության առանձնահատկությունները, լրագրողների հավատարմագրման կարգում սահմանում է տվյալ մարմնում հավատարմագրված լրագրողի աշխատանքի կազմակերպման կանոնները, այդ թվում՝ նրա աշխատանքի արդյունավետության ապահովմանն ուղղված պայմանները, ինչպես նաև սահմանում տվյալ մարմնի գործունեության առանձնահատկություններից բխող պահանջներ: Ազգային ժողովում այդ մարմինը Ազգային ժողովի խորհուրդն է, որը հաստատում է Ազգային ժողովում լրագրողների հավատարմագրման, ինչպես նաև Ազգային ժողովի նստավայրում մամուլի ասուլիսների, ճեպազրույցների անցկացման կարգը:

Իր հերթին, հավատարմագրված լրագրողն իր աշխատանքը պարտավոր է կազմակերպել պետական մարմնում լրագրողների հավատարմագրման կարգին և համապատասխան պետական մարմնի աշխատակարգի կանոններին համապատասխան, որոնց պահանջների խախտման համար գրավոր նախազգուշացվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին նման խախտում թույլ տալը հիմք է լրագրողի հավատարմագրումը դադարեցնելու համար:

Վերոգրյալից հետևում է, որ Ազգային ժողովը, սահմանելով լրագրողների հավատարմագրման կարգը, վերջիններիս համար նախատեսում է Ազգային

ժողովում լրագրողական գործունեության իրականացման որոշակի պայմաններ, որոնց լրագրողը պարտավոր է հետևել Ազգային ժողովի վարչական շենքում գործունեություն իրականացնելիս: Հակառակ պարագայում Ազգային ժողովը համապատասխան մարմնի միջոցով իրավասու է կիրառելու ներգործության միջոցներ, մասնավորապես՝ դադարեցնել լրագրողի հավատարմագրումը, որպիսի լիազորությունը, ըստ էության, բխում է Ազգային ժողովի գործադիր կարգադրիչ գործունեությունից և ուղղված է հանրային շահի իրացմանը, այն է՝ Ազգային ժողովի վարչական շենքում կարգուկանոնի հաստատմանը:

Այսինքն՝ լրագրողի հավատարմագրման դադարեցման առնչությամբ ծագող վեճը բխում է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ Ազգային ժողովի համապատասխան մարմնի՝ Ազգային ժողովի խորհրդի կողմից հավատարմագրված լրագրողների աշխատանքային գործունեության կարգը սահմանելու կապակցությամբ հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությանը, իսկ քննության ենթակա պահանջի հիմքում ընկած վիճելի իրավահարաբերությունն ուղղված է հանրային շահի ապահովմանը:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Քնարիկ Մանուկյանը 2024 թվականի փետրվարի 15-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի՝ 2023 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1/6399-2023 գրությամբ հայցվորի հավատարմագրումը դադարեցնելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին[4],

- հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի մարտի 5-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ Քնարիկ Մանուկյանի և պատասխանողի միջև վեճը ծագել է ոչ թե պատասխանողի՝

[4] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

որպես վարչական մարմնի գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում, այլ այն վերաբերում է Քնարիկ Մանուկյանի՝ որպես հավատարմագրված լրագրողի կողմից իր մասնագիտական գործունեության՝ աշխատանքի կազմակերպման վերաբերյալ վարքագծի կանոնները խախտելուն, որոնք սահմանվել են ներքին (լոկալ) իրավական ակտ հանդիսացող՝ ՀՀ Ազգային ժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ԱԺԽՈ-044-Լ որոշմամբ, որպիսի որոշման հիմքով Քնարիկ Մանուկյանը և ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը գտնվում են աշխատանքային հարաբերությունների մեջ՝ այնքանով, որքանով ՀՀ Ազգային ժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ԱԺԽՈ-044-Լ որոշմամբ սահմանվել են հավատարմագրված լրագրողի աշխատանքի կազմակերպման կանոնները[5],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2024 թվականի մարտի 29-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարան՝ նշելով, որ ներկա պարագայում առկա է հանրային վեճից բխող իրավահարաբերություն, և լրագրողի հավատարմագրումը դադարեցնելու մասին որոշումը կայացվել է Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի կողմից հանրային իշխանական լիազորությունների իրացման արդյունքում և ուղղված է եղել Ազգային ժողովի խորհրդի կողմից ամրագրված կանոնների պահպանմանը: Սույն վարչական գործով մի կողմ է հանդիսանում Ազգային ժողովը, որն իր հանրային իշխանական լիազորությունների իրացման արդյունքում ապահովում է այլ սուբյեկտների ենթարկվածությունը, այսինքն՝ խոսքը գնում է վերադասության և ստորադասության հարաբերությունների մասին: Տվյալ դեպքում այն դրսևորվում է Ազգային ժողովի խորհրդի կողմից ընդունված թիվ ԱԺԽՈ-044-Լ որոշմամբ, որը Ազգային ժողովի վարչական շենքում լրագրողների գործունեության կանոններ է

[5] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

սահմանում, որն արտահայտում է պետության շահը, և որին պարտավոր ենք հետևել այն անձինք, որոնց գործունեությանն ուղղակիորեն առնչվում է[6]:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-10-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ հայցադիմումով Քնարիկ Մանուկյանի հայցի առարկան իր հավատարմագրումը դադարեցնելու վերաբերյալ կայացված որոշման վիճարկումն է, իսկ հայցի հիմքը՝ իր լսված լինելու իրավունքի խախտման, ինչպես նաև կիրառելի իրավանորմերի ընտրության և իր իրավունքների սահմանափակման վերաբերյալ փաստարկները:

Ուստի, սույն գործով իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր աշխատանքային, այլ հանրային իրավահարաբերություններից, քանի որ հայցվորի և Ազգային ժողովի աշխատակազմի միջև ծագած վեճը վերաբերում է Ազգային ժողովի կողմից հաստատված լրագրողների հավատարմագրման կարգով սահմանված պահանջների խախտման հետևանքով լրագրողի նկատմամբ կիրառված ներգործության միջոցի, այն է՝ վերջինիս հավատարմագրումը դադարեցնելու վերաբերյալ կայացված որոշման իրավաչափության վիճարկմանը:

13. Վերոգրյալից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/1751/05/24 գործն ըստ հայցի՝ Քնարիկ Մանուկյանի ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի՝ 2023 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1/6399-2023 գրությամբ հայցվորի հավատարմագրումը դադարեցնելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր է:

Ուստի, Քնարիկ Մանուկյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/1751/05/24 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

---

[6] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ/1751/05/24 գործն ըստ հայցի՝ Քնարիկ Մանուկյանի ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի՝ 2023 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1/6399-2023 գրությամբ հայցվորի հավատարմագրումը դադարեցնելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ**	**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ**
ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ	**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ**	